



ԱՐԱՍ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՊՏՀ փիլիսոփայության և հայրց պատմության
ամբիոնի վարիչ, փիլիսոփայական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ՈՐՏԵՂ ՈՐՈՆԵՆՔ ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ ՈՐՆ Է ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հեղինակն այն տեսակետն է փորձում հիմնավորել, որ հայ ժողովրդի ինքնու-
թյունն արտահայտվում է նրա ստեղծած ընտրանու մշակույթի, ազգագրական և ժողո-
վրդական ենթամշակույթների կատարյալ ձևերում, իսկ առաքելությունը այդ մշա-
կույթի և այժեքների պահպանման, զարգացման ու փոխանցման միջոցով աշխարհը
հարստացնելն է:

Հիմնաբառեր. ինքնություն, մշակույթ, զանգվածային, բարձրաշխարհիկ, ընտ-
րանի, ժողովրդական, ազգագրական, կենցաղային, զարգա-
ցած միջնադար, միաբանություն, առաքելություն, այժեհանա-
կարգ

Ինքնագիտակցության և ռեֆլեքսիայի մակարդակի հասած յուրաքանչ-
յուր անհատ, հասարակություն և ազգ, ի վերջո, փորձելու է հասկանալ, թե
ո՞վ է ինքը, որտեղի՞ց է գալիս և ու՞ր է գնում: Այդ հարցերը հայ տեսական
մտքում հանրային աշխույժ քննարկման առարկա դարձան XIX դարում
(հատկապես դարի երկրորդ կեսին), որովհետև օբյեկտիվ և սուբյեկտիվ
գործընթացները (արևմտաեվրոպական ժողովուրդների պայքարը բռնակա-
լական ռեժիմների, իսկ Արևելյան Եվրոպայինը՝ Օսմանյան կայսրության դեմ,
լուսավորականության արմատավորումը և տարածումը հայկական գաղթ-
օջախներում, քիչ ուշացումով՝ մայր հայրենիքում, հասարակական կյանքի և
մշակույթի ապակրոնացումը, ազգի ապակրոն ըմբռնման ձևավորումը և այլն)
նախադրյալներ ստեղծեցին հայ ժողովրդի ազգային գարթոնքի համար: Այդ
դարի հայ մտածողների կարծիքով՝ **«Ո՞վ ենք մենք»** հարցադրման պատաս-
խանը չունեցող անհատն ու ազգը նմանվում են անելիքը չիմացող մարդ-
կանց, որոնք գնում են իրադարձությունների հետևից, շատ բան անում ուշա-

ցումով ու սխալ: Մինչդեռ XIX դարում հայ ժողովրդի համար ստեղծվել էին այնպիսի պայմաններ, որոնք, եթե չիմաստավորվեին, եթե համապատասխան հետևություններ չարվեին, ապա, ըստ այդ ժամանակաշրջանի հայ մտածողների, կրթվեր ազգի լինել-չլինելու հարցը: Ահա թե ինչու Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի հերոսներից մեկն ասում է. «Ախր մեր ազգը որ խեղճ ա մնացել, թրի, կրակի եսիր, բոլորի պատճառն էս ա, որ մեզ մեկ ասող չի ըլլում, թե մենք ո՞վ ենք, մեր հավատն ի՞նչ ա, ընչի՞ համար ենք էկել աշխարհ»¹: Աբովյանական այս հարցադրումը հետագայում շարունակում և զարգացնում են Հ. Թումանյանը և Գ. Նժդեհը: Հ. Թումանյանը, հաճախակի անդրադառնալով ազգային ինքնաճանաչման խնդրին, ցավով արձանագրում է. «Երկիր ունենք - չենք ճանաչում, պատմություն ունենք - չենք ճանաչում, ժողովուրդ ունենք - չենք ճանաչում, գրականություն ունենք - չենք ճանաչում, լեզու ունենք - չենք իմանում»²: Այնուհետև շարունակում է. «Չգիտենք մենք ի՞նչ ենք եղել, ի՞նչ ենք արել, ինչո՞ւ և ինչպես, ի՞նչ օրով, ի՞նչ ճանապարհով ենք էստեղ հասել»³: Շարունակելով դաժան քննադատությունը՝ բարի ու իմաստուն Թումանյանը նշում է. «...հայ ժողովուրդը չունի և չգիտե իր պատմությունը, նույնիսկ երեկ մեկել օրվա պատմությունը. չգիտի թե ո՞վ է ինքը, ո՞րտեղից է գալիս և ո՞ւր գնում»⁴: Թումանյանը նույնպես փորձում է հասկանալ, թե «ո՞րն է էս ժողովրդի պատմական ճանապարհը, սրա գոյության խորհուրդը, ի՞նչ է կամենում սա, սրա ոգին: Եվ ո՞ւր որոնենք էդ ոգին»⁵: Գարեգին Նժդեհը նույնպես այն համոզմանն է, որ մեր դժբախտությունների ակն ու աղբյուրը սեփական պատմությունը չիմանալն է, հետևաբար՝ դրանից օգտվել չկարողանալը: Նա գրում է. «Արդարև, առանց ցեղային ինքնաճանաչումի անկարելի է գերծ մնալ սեփական ուժերը ստորագնահատելու, ինչպես եւ գերագնահատելու աղէտալի սխալանքէն», «Այո, ժողովուրդների անզօրութեան եւ դժբախտութեան ամենաներգործօն պատճառը իր սեփական էութեան մասին ունեցած տգիտանքն են, անինքնաճանաչողութիւնը – իմա անցեղաճանաչութիւնը»⁶: Առաջադրված հարցերի պատասխաններն իմանալն անհրաժեշտ է, որովհետև, ինչպես XIX դարի հայ մտածող Մ. Մամուրյանն է նկատում՝ «իր անցյալից, ներկայից անտեղյակ ու նպատակը չիմացող ազգը նման է երկրտանի անբանների դասակի»⁷:

Եվ այսպես, խիստ համառոտ (որովհետև հարցը տարողունակ է, մանրամասն ու համակողմանի վերլուծության կարիք ունի) քննարկենք, թե ի՞նչ ենք մեզանից ներկայացնում որպես ազգ՝ զուտ ինքնաճանաչման տեսակետից, ո՞րն է մեր ազգի ոգին, և որտե՞ղ որոնենք այն: Նախ՝ տեսական բացատրություն: Հոգեբան Ա. Նալչաջյանի կարծիքով՝ ազգային ոգին ազգի խառնվածքի և բնավորության հուզական դրսևորումն է, մտածելակերպը (մենթալիտետը), նրա իմացական գործողությունների գերակշռող ոճը⁸: Ազգի ոգին դրսևորվում է ընդհանուր գնահատականներում: Նույն հեղինակի մեկ այլ սահմանմամբ. «Ազգի (էթնոսի) ոգին նրա հոգեբանական կերտվածքի հուզական դրսևորումն է՝ կայուն տրամադրության, հոգեվիճակի ձևով»⁹:

¹ Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, Երկեր, Եր., 1984, էջ 34:

² Հ. Թումանյան, Մեծ ցավը, ԵԼԺ տասը հատորով, հ. 6, Եր., 1994, էջ 174:

³ Նույն տեղում, էջ 174:

⁴ Հ. Թումանյան, Հայոց պատմություն, նշվ. հրատ., էջ 355:

⁵ Հ. Թումանյան, Հայի ոգին, նշված հրատ., էջ 194, 195:

⁶ Գարեգին Նժդեհ, Ցեղային արթնություն // «Ազգայնական միտք», թիվ 5, Եր., 1999, էջ 3:

⁷ Մ. Մամուրյան, Երկեր, Եր., 1966, էջ 108:

⁸ Տե՛ս Ա. Նալչաջյան, էթնիկական հոգեբանություն, Եր., 2001, էջ 252:

⁹ Նույն տեղում, էջ 251:

Լինելով պրոֆեսիոնալ հոգեբան՝ Ա. Նալչաջյանը այս սահմանման մեջ «ոգի» եզրը մեկնաբանել է «հոգի» իմաստով: Կարծում ենք՝ «ոգի» ասելով չպետք է հասկանալ միայն «*հոգեբանական կերտվածքի հուզական դրսևորումը*» կամ «*հոգեվիճակը*», դա ազգի *հոգևոր-բարոյական կերպն է, ինքնությունը*, որը դրսևորվում է որոշակի արժեհամակարգում, գործունեության մեջ, վարքագծում և մշակույթում: Իսկ ինքնությունը նշանակում է. «...ինքզինք ըլլալ, այսինքն՝ ան մեր անձնականությունն է... մեր անհատականությունը... մեր «է»-ն է, իբր գոյութեան եւ գործունէութեան սկզբունք...»¹⁰:

Ազգային ինքնության դրսևորման բաղադրիչներն են.

- ա) ֆիզիոլոգիական (բնախոսական), ցեղային, մարդաբանական (անտրոպոլոգիական) տարբերությունները,
- բ) գիտակցությունն ու ինքնագիտակցությունը,
- գ) հոգեբանական առանձնահատկությունները,
- դ) կենցաղը,
- ե) լեզուն,
- զ) ազգային պատմության առանձնահատկությունները,
- է) մշակույթը և այլն:

Ինքնության խնդիրներն այստեղ կքննարկենք հայի բնավորության և վարքագծի, եկեղեցու, պետության և մշակույթի դիտանկյուններից:

Փորձելով ներկայացնել մեր ազգի հոգևոր-բարոյական կերպարը, նկարագիրը (այն, ինչով նա առանձնանում, աչքի է ընկնում) ընդհանուր գնահատականների ձևով՝ որպես հիմք ունենալով հայի բնավորությունն ու վարքագիծը, ականատես ենք լինում շատ հակասական պատկերի՝ ամենադրական, հիացական բնութագրումներից մինչև ամենաբացասականը: Սկսենք դրականից և Գարեգին Նժդեհից: Ըստ նրա՝ հայի կարևորագույն գծերից են.

- բարոյական և մտավոր լրջությունը, որն ամենից առաջ ենթադրում է ծանրախոհություն,
- էության բերումով հայն իր գոյությանը տալիս է որոշ սրբացում և նպատակ՝ ձգտելով իմաստավորել այն ու կատարելագործել,
- հայը իդեալի ժողովուրդ է, իսկ իդեալը ենթադրում է ոգու խռովք, նպատակասլացություն, լավագույնի կարոտ,
- հայը համոզված է, որ աշխարհը մարդուն տրված է ոչ միայն վայելելու, այլ նաև կատարելագործելու, բարելավելու համար. առաջնորդվելով այս աշխարհըմբռնմամբ՝ հայը իր հարևանների միջավայրում բոլորից վաղ մարդկայնացավ,
- հային ծանոթ չէ չարականության ուրախությունը. նա չարախինդ չէ, ցանկանում է տեսնել իր թշնամու պարտությունը և ոչ դժբախտությունը,
- հայը նախանձ չէ,
- հայը աչքը կուշտ ժողովուրդ է,
- հայն իրեն ավելի բարձր է զգում, քան իր երկրին իշխողը, նրան խորթ է «ստրկական երկյուղը»,
- հային բնորոշ է շինարարական տենչը,
- հայն ավելի շատ պարտականության, քան երջանկության ձգտող էակ է, այդ պատճառով նրա բարոյականությունը երջանկապաշտական (էվդեմոնիստական) չէ,

¹⁰ Հ. Լևոն Չեքիեան, Ինքնութեան խճանկար, Պէյրուս, 2002, էջ 109:

- հայը սահմանակցել է իդեալականին, սրբազանին, հավերժին և նրանց շունչը խառնելով իր առօրեական կյանքին՝ դրանով իսկ սնել ստեղծագործական ավյունը,
- հավերժանալ արարելով, ստեղծագործելով. ահա հայկականը, չափազանց հայկականը, և դա է պատճառը, որ հայը ոչ միայն վարել է իր անհավասար գոյամարտը, այլև հարուստ ստեղծագործությամբ փառահեղ էջ բացել համաշխարհային մշակույթի պատմության մեջ¹¹,
- հայը սոցիալապես առողջ է, արդար, իդեալիստ, ցեղորեն հպարտ, ծուլություն չսիրող, բարոյական զգացումով, ազգայնորեն զգաստ. ճշմարիտ տղամարդն է հայը,
- որակի ազգ է, ստրկության մեջ, օտարի լծի տակ անգամ եղել է ազգային բարոյականով զորավոր ժողովուրդ¹²:

Ըստ Հրանտ Մաթևոսյանի՝ հայը տիրական ցեղ է. ոչ մի բանի տեր չլինելով՝ կայսրությունների մեջ ընկած իդեալիստների ցեղ է, ճորտացված երկրների մեջ ճորտեր չդարձողների ցեղ է¹³:

Վերջին շրջանում ՀՀ ԶԼՄ-ներում քննարկվող՝ «Հայաստանի հասարակություն» և «հայեր» իդեոլոգեմների դրական և բացասական ընդհանրական պատկերացումների հետաքրքիր առանձնացում է կատարվել: Ներկայացնենք դրական բնութագրությունները.

«Հայաստանի հասարակությունը».

- արժանապատիվ և համախմբված հասարակություն է,
- քաղաքացիական բարձր գիտակցության հասարակություն է,
- կազմակերպված և ինքնավստահ հասարակություն է,
- ինքնագիտակցության բարձր մակարդակի հասարակություն է:

«Հայը».

- քաղաքակիրթ ազգ է,
- գործող, ստեղծագործող ազգ է,
- իր բնօրրանում ապրող ազգ է,
- մշակույթին, ավանդական ընտանիքին հավատարիմ ազգ է,
- աշխատասեր, հյուրասեր ազգ է,
- ազնվագույն տեսակի մարդ է՝ հարուստ ներաշխարհով, ուշադիր ու սիրալիր,
- անկոտրում կամքով և վճռականությամբ լցված ազգ է¹⁴:

Դրական ընդհանրական բնութագրությունների մեջ հանդիպում ենք նաև այսպիսի գնահատականների. հայը հավատարիմ է, կրթասեր, գիտելիքի հարգը իմացող, ընտանեասեր, ներողամիտ, հայրենասեր, շինարար, մշակութաստեղծ, օգնության հասնող, կարեկից, խաղաղասեր, քեն չպահող, պատվախնդիր, նեցուկ կանգնող, առաքինի, նվիրված, հյուրասեր, աշխատասեր (քարից հաց քամող), խղճով, և այդպես շարունակ:

Այժմ անդրադառնանք բացասական որակներին և դարձյալ օգնության համար դիմենք մեր մեծերին, այս դեպքում՝ Մովսես Խորենացուն, Հովհաննես Թումանյանին և Գարեգին Նժդեհին:

Դատելով Մովսես Խորենացու «Ողբ»-ից՝ կարող ենք ասել, որ մեր բացասական գծերի մեծ մասը «էն գլխից» է գալիս և ոչ թե ձևավորվել է դարերի ընթացքում (ինչպես հաճախ փորձում ենք մեզ մխիթարել):

¹¹ Տե՛ս **Գարեգին Նժդեհ**, Հայը, Հատընտիր, Եր., 2006, էջ 350-358:
¹² Տե՛ս **Գարեգին Նժդեհ**, Խօսակցութիւն մը զօրավար Գ. Նժդեհի հետ, Հատընտիր, էջ 65:
¹³ Տե՛ս **Հ. Մաթևոսյան**, Ես ես եմ // Հարց-պատասխաններ, Եր., 2005, էջ 91:
¹⁴ Տե՛ս Իդեոլոգեմները ՀՀ տեղեկատվական տարածքում, Եր., 2013, էջ 237, 244:

Ըստ Խորենացու՝ մեր.

- ուսուցիչները՝ տխմար և ինքնահավան են,
- կրոնավորները՝ կեղծավոր, ցուցամուլ, սնափառ,
- վիճակավորները՝ հպարտ, դատել սիրող, դատարկախոս,
- աշակերտները՝ սովորելու մեջ ծույլ,
- ժողովրդականները՝ ամբարտավան, ստահակ, մեծախոս, աշխատանքից խուսափող, վնասագործ, ...,
- զինվորականները՝ անարի, պարծենկոտ, զենք ատող, ծույլ, ցանկասեր, թուլամորթ,
- իշխանները՝ ապստամբ, կաշառակեր, կծծի, ժլատ, ագահ....,
- դատավորները՝ տմարդի, սուտ, խաբող, կաշառակեր, իրավունքը չպաշտպանող....¹⁵:

Խորենացու կարծիքով՝ այդ ամենի պատճառն այն է, որ մեզ տիրեցին խստասիրտ ու չար թագավորները, որոնց վատ ղեկավարության հետևանքով կարևոր մարդիկ կապված են, հայտնի անձերը՝ բանտարկված, դեպի օտարություն են աքսորվում ազնվականները, անթիվ նեղություններ են կրում ռամիկները: Անվերջ սով է ու հիվանդություն¹⁶:

Հետաքրքիրն այն է, որ այդ ամենի պատճառով, ըստ Մ. Խորենացու, բնությունն էլ է փոխվել. ոչ գարունն է գարուն, ոչ ամառը՝ ամառ¹⁷:

Հովհաննես Թումանյանը կարծում է, որ «մեր ամբողջությունը տառապում է մի ծանր ու խոր բարոյական հիվանդությամբ. մենք դառնացած ժողովուրդ ենք», ապա ավելացնում. «Արդ՝ եթե մենք ունենք ազգային իմաստություն, հոգու արիություն և առողջ բնազդներ, անկարելի է աչքներս փակենք մեր էս ծանր հիվանդության առաջ և չզգանք, որ մեր հոգին շատ է դառնացած, մեր ներքին մարդը շատ է փչացած....»¹⁸:

Ըստ Թումանյանի՝ նույնիսկ օտարները մեզ չեն սիրում ու հարգում, որովհետև «պարզ տեսնում են, որ մենք որպես առանձին ժողովուրդ չունենք ինքնուրույն պատկեր ու բովանդակություն և հանդիսանում ենք միմիայն իր աղավաղումը»¹⁹:

Այժմ դիմենք Գարեգին Նժդեհին: Նրա կարծիքով՝ հայը, բացի սեփական բազկի ուժից, հավատում է ամեն ինչի, այդ պատճառով իր ամբողջության մեջ պարտվողական է:

Նրա կարծիքով՝ Հայկական Հանրապետության (խոսքն Առաջին հանրապետության մասին է) անկման պատճառը անմիաբանության չար ոգին էր, որը մեր ժողովրդից խլել էր անօրինակ քաջությունից առատորեն և լիովին օգտվելու կարելիությունը: Պատերազմներում մեր ժողովրդի պարտությունների պատճառները եղել են գերազանցորեն հոգեբանական, որովհետև անմիաբանության պատճառով հայի զենքն ու բազուկն ավելի օտարին են ծառայել, քան հարազատ երկրին: Թշնամին Հայաստանին հաճախ տիրել է ոչ թե հաղթության սրով, այլ հայ պետական գործչի դավով ու դավաճանությամբ²⁰:

¹⁵ Տե՛ս Մ. Խորենացի, Հայոց պատմություն, ԵՊՀ, 1981, էջ 315-316:

¹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 316-317:

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 316:

¹⁸ Հ. Թումանյան, Պառնացած ժողովուրդ ենք, ԵԼԺ տասը հատորով, հ. 6, էջ 225:

¹⁹ Հ. Թումանյան, Մեծ ցավը, նշվ. հրատ., էջ 176:

²⁰ Տե՛ս Գարեգին Նժդեհ, Յիշիր պատերազմը // Բ հրատարակություն, էջ 47, 66:

Քաղաքական և թվական անզորության և հատվածականության բերու-
նով հայր. «Դառել է մեղկ, զիջող եւ նկուն օտարի հանդէպ, հիացողն ու
խնկարկողը օտար ոյժի, հաւատացող օտար աստուածութիւններին»²¹: Իր
ամբողջության մեջ հայն այսօր պարտվողական է, անհայրենասեր և ան-
արի²²:

Նժդեհի՝ ազգին տված բացասական բոլոր ընդհանրական բնութագրու-
թյունները վերաբերում են իր օրերի հայությանը, որն անինքնաճանաչ է, ունի
արիության պակաս («Ահա, – ասում է Նժդեհը, – վատ հայի և նրա վատու-
թյունների մայր պատճառը»)²³: «Իհարկե, մեր ժողովրդի պատմական ճակա-
տագրում բացասական դեր են կատարել նաև օտարները, բայց մեղավոր
ենք նաև մենք, որովհետև մենք ենք մեր քաղաքական բախտի ճարտարա-
պետը... Մի՞թե օտարն է մեղավոր, որ մեզանում մեծաթիվ հայերի համար
մայիսի 28-ը մնում է «բացակայող Աստուածութիւն»²⁴: Ապա Օտա՞րն է մե-
ղավոր, որ մենք հայրենապաշտ չենք: Օտա՞րն է մեղավոր, որ ամեն հայի
մոր կաթը Հայաստանի անկախության գաղափարի սրբազան կաթը չէ, որ
բարձր հայրենասիրութեան կրակն ու լոյսը չեն թափանցել մեր ժողովրդի
բոլոր խաւերի մեջ»²⁵: Իհարկե, ո՛չ: Այդ ամենի մեղքը մեր մեջ պիտի որոնենք,
մաքրվենք և ոչ թե հերթական անգամ ազգովի, գուցե վերջին անգամ (եթե
այդպես շարունակվի) վերցնենք գաղթականի ցուպը: Ցավալի է, բայց ազգի
մեծամասնության մեջ նստած է գաղթականի ոգին, առաջնորդվում է ինքնա-
պահպանման բնազդով: Հայի այս տեսակը հայրենիք չունի: Նա աշխարհում
իր և իր ընտանիքի համար ապահով անկյուն է որոնում:

Շարունակելով վեր հանել հայի բացասական գծերը՝ Նժդեհը ցավով է
նկատում. «Մեր ժողովրդին ցաւագինօրէն կը պակասէր հոգեկան մշա-
կոյթը»²⁶, որի մեջ առանձնացնում է հետևյալ թերությունները.

- ա) ամեն գնով ապրելու խելագար ցանկություն,
- բ) պարտվողական հոգեբանություն,
- գ) նյութական ծայրահեղ մտահոգվածություն,
- դ) հասարակական զգացումի տհասություն,
- ե) գիտակցական կարգապահության բացարձակ չզոյություն,
- զ) ընդհանուր հայրենիքի գաղափարի պակաս (սակայն զուրկ չէ տե-
ղական հայրենասիրությունից),
- է) գիտակցված զոհաբերության և բարձր թռիչքների անընդունակու-
թյուն,
- ը) ցեղի հավաքական ճակատագրի նկատմամբ անտարբերություն և
ցեղային բարոյականության կորուստ:

Դարերով զրկված պետական կյանքից՝ հայությունը (հատկապես նրա
մտավորականությունը) իրեն ազատ է համարել հավաքական, հասարակա-
կան պարտականություններից, որի պատճառով տկարացել է հայ մտավո-
րականի՝ ազգի նկատմամբ ունեցած պատասխանատվության զգացումը:
Օտարի՝ դարեր տևած նվաստացուցիչ վերաբերմունքը, հասարակական

²¹ Նույն տեղում, էջ 70:

²² Տե՛ս նույն տեղը:

²³ **Գարեգին Նժդեհ**, Հայու լավագույնը, Հատընտիր, էջ 378, նույնի Անարիություն, նույն տեղում,
էջ 442:

²⁴ **Գարեգին Նժդեհ**, Օրերի օրը, նույն տեղում, էջ 445:

²⁵ Նույն տեղում, էջ 446:

²⁶ **Գարեգին Նժդեհ**, Յիշիր պատերազմը // Բ հրատարակություն, էջ 68:

կյանքի, իդեալների և պարտականությունների պակասը հայ մարդուն կապել են իր նեղ հարկին, ընտանիքին: Հասկանալի է, որ դարեր տևած այս հոգեբանական մթնոլորտը ժողովրդի մեջ պիտի փոխեր պատկերացումները հասարակական և պետական կյանքի մասին, ժողովուրդը պիտի տարվեր առօրյա կյանքով, դառնար անտարբեր իր ցեղի հավաքական ճակատագրի նկատմամբ և կորցներ իր ցեղային բարոյականը²⁷:

Այժմ «Հայաստանի հասարակություն» և «հայեր» իդեոլոգեմների ընդհանրական բացասական պատկերացումների մասին:

«Հայաստանի հասարակություն».

- անօրինական հասարակություն է,
- բարոյալքված և ամենաթողության հասարակություն է,
- եսակենտրոն հասարակություն է,
- սոցիալական բևեռացման հասարակություն է,
- ցանկությունների և հնարավորությունների անհամատեղելիության հասարակություն է,
- ցածր էկոգիտակցությամբ հասարակություն է,
- հանդուրժողականության պակասի հասարակություն է,
- անհատապաշտական մշակույթով հասարակություն է,
- հիասթափված հասարակություն է,
- ահավոր քայքայման ենթարկված հասարակություն է,
- հանապազօրյա հացի փնտրտուքի հասարակություն է,
- վստահության պակասի հասարակություն է,
- հեռանկարի բացակայության հասարակություն է²⁸:

«Հայր».

- Օտարից «թխող», ստրկամիտ ազգ է,
- շողոքորթ, մեծամիտ ազգ է,
- մեզ դրել ենք ամենախելոք ազգի տեղը և ոչինչ չենք ցանկանում սովորել ուրիշներից,
- սեփական խնդիրների լուծումը ուրիշների վրա բարդող ու նստող-սպասող ազգ է,
- անվիճելիորեն հնազանդվող ազգ է²⁹:

Բացասական բնութագրումներում հանդիպում ենք նաև հետևյալ բնորոշումներին. հայն անմիաբան է, օտարամոլ ու շահամոլ, սնապարծ, համակերպվող, պետականասեր չէ, անտարբեր է, կենցաղում՝ խիստ փնթի, չի սիրում իր հայրենիքը, առաջնորդվում է նստակյաց և քաղաքակիրթ ազգին ոչ հարիր հոգեբանությամբ («որտեղ հաց, այնտեղ կաց»), ցանկացած գործում, աշխատանքում, պաշտոնում փորձում է իր անձնական օգուտը, շահը տեսնել: Աշխատանքում գլուխ պահող է, անբարեխիղճ (շատ հարցեր լուծում է ծանոթի ու կաշառքի միջոցով): Հայն իր ազգին հասած դժբախտությունների համար մեղադրում է բոլորին, բացի իրենից, տառապում է զոհի բարդույթով:

Այժմ անդրադառնանք իրարամերժ բնութագրումներին: Ըստ Դ. Դեմիրճյանի՝ հայը «իր կյանքում երկու բան չտեսավ. մեկ՝ բախտ, մեկ էլ՝ հուսահատություն», հայը «իբրև ժողովուրդ անմիաբան է, անտանելի խռովարար», նա «չի սիրում ո՛չ ստրկություն, ո՛չ երջանկություն, գերադասում է տա-

²⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 68-72:

²⁸ Տե՛ս Իդեոլոգեմները ՀՀ տեղեկատվական տարածքում, նշվ. հրատ., էջ 237, 245:

²⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 237:

ռապանք և ազատություն»³⁰: Ժողովրդական բանահյուսության մեջ իշխող է այն տեսակետը, որ ծայրահեղությունների ազգ ենք. մեր ո՛չ լավն է ձեռք ընկնում, ո՛չ վատը: Ահա, բնութագրությունների ոչ սպառիչ ցանկը: Այս ամենն իմացողը կարո՞ղ է անվարան պատասխանել՝ ո՞րն է հայի ոգին, նրա հոգևոր-բարոյական կերպը, կերպարը, բնութագիրը: Այստեղից էլ ազգի բարոյական կերպարին տրվող գնահատականների ծայրահեղականությունը՝ հրաշալի, ազնվագարմ ազգից մինչև «ազգ չենք»-ը:

Այսպիսով՝ հայն իր բնավորության և վարքագծի հակասականության պատճառով չի կարող արտահայտել ազգի ընդհանրական ոգին, հոգևոր-բարոյական կերպը:

Պետությունը նույնպես չի կարող արտահայտել մեր բնութագիրը, կերպը, որովհետև պատմական շատ քիչ ժամանակահատվածներում ենք ունեցել, ունենալիս էլ արժեքը չենք իմացել, երբեմն էլ մեր իշխանություններն արժանի չեն եղել այն ժողովրդին, որին ներկայացրել են:

Հաճախ այն տեսակետն է հայտնվում, թե մեր ճշմարիտ էությունն արտահայտում է հայ եկեղեցու դավանած քրիստոնեությունը: Հարցի մանրամասն քննությունը թողնելով ապագային՝ այստեղ պարզապես նշենք.

ա) Քրիստոնեությունը ստեղծվել է օտար վայրում, օտար միջավայրում, մեզ պարտադրվել է և մեր էության արտացոլումը լինել չի կարող: Հակառակը՝ ոչնչացրել է մեր հեթանոս անցյալը, կտրել մեզ մեր նախաստեղծ հոգևոր-բարոյական կերպարից: Քրիստոնեությունը փոխել է մեր էությունը, մեզ էությամբ (և ոչ թե միայն հավատով) դարձրել քրիստոնյա: Շատ ուշագրավ մի օրինակ. երբ Վարդան Մամիկոնյանն ու Ղևոնդ Երեցը Ավարայրում մինչև ճակատամարտն սկսելը իրենց ելույթներով փորձում են ոգևորել զորքին, որևէ հիշատակում չեն կատարում հայ ժողովրդի պատմությունից ու քաջ նախնիներից, այլ՝ Հին Կտակարանից, հրեաներից, մասնավորապես՝ Անտիոքի թագավորի դեմ մաքաբեղացիների պայքարից, եգիպտացիներից Մովսեսի վրեժ լուծելուց, Քրիստոսի զոհաբերությունից և այլն: Այն տավորությունն է, թե հրեական զորք է, հրեա զորավար և հոգևորական, որ դուրս են եկել պայքարի՝ հրեական հավատն ու տարածքը պաշտպանելու համար: Զրոյացվում է մի ողջ ժողովրդի պատմության հսկայական ու հերոսական ժամանակաշրջան:

բ) Քրիստոնեությամբ մեզանում արմատավորվել է ոչ թե հանուն հայրենիքի կռվելը, հաղթելը, հարկ եղած դեպքում զոհվելը, այլ հանուն հավատի սիրահոժար, կամովին նահատակվելն ու մարտիրոսանալը (Կորյունի, Ղազար Փարպեցու գործերում կամավոր նահատակության բազմաթիվ օրինակների կարելի է հանդիպել):

գ) Եթե դա այդպես է, ապա չի՞ կարելի կարծել, թե քրիստոնեական նահատակության և մարտիրոսության զաղափարները, Քրիստոսի քարոզած «չարին չհակառակվելու» և «թշնամուն սիրելու» պատվիրանները թուլացրել են հայի բազկի ուժը, հանուն հայրենիքի ու պետության կռվելու վճռականությունը: Արդյո՞ք դա չէ նաև պատճառը, որ տևական ժամանակաշրջանի համար ուժեղ, կուռ պետականություն չկարողացանք ստեղծել:

դ) Եթե դարերի ընթացքում ունեցած ազդեցության և ներգործության հետևանքով հայի կերպարում, այնուամենայնիվ, բնութագրական է դարձել մեր եկեղեցու դավանած ու քարոզած քրիստոնեությունը, ապա դա հայի ոչ

³⁰ Ղ. Դեմիրճյան, Հայը, Երկերի ժողովածու 14 հատորով, հ. 14, Եր., 1987, էջ 462-469:

թե ճշմարիտ, այլ վերափոխված, վերասերված, սնող ակունքից կտրված կերպարն է:

Այժմ անդրադառնանք մշակույթին: Հայի ստեղծած մշակույթն է դարձել նրա ոգու, հոգևոր-բարոյական կերպարի, ինքնության արտահայտիչը: Մեզանում «էթնիկական» և «մշակութային ինքնություն» հասկացությունները նույնացվել են:

Ընդունված տեսակետի համաձայն՝ ազգային մշակույթն արտահայտում է տվյալ ազգի մշակութային ինքնատիպությունը, որի պահպանումը նաև ազգի պահպանության խնդիրն է, որովհետև էթնիկ ինքնությունը պահպանող ամենավճռական գործոններից մեկը մշակութային ինքնատիպությունն է: Յուրաքանչյուր ազգ ինքն է ստեղծում իր մշակույթը (անկախ փոխազդեցություններից), որով աշխարհին է ներկայացնում իր դեմքն ու դիմագիծը: Ցանկացած ազգ արժե այնքան, որքան արժե նրա ստեղծած մշակույթը:

Հայ ժողովրդի պատմության մեջ ազգի ինքնության և առհասարակ գոյության պահպանման գործում մշակույթի դերն ավելի մեծ է եղել, քան նույնիսկ պետությունը: Ղարեր շարունակ հայ ժողովրդի ծուլմանը հակազդող հիմնական գործոններից մեկը մշակույթն է եղել: Մենք օտարի բռնությանը, ոչնչացման քաղաքականությանը հակադրել ենք մեր մշակութային արարչագործությունն ու հրաշագործությունը: Լ. Ջեքիյանի կարծիքով՝ հայի ինքնությունը մշակութային է, որի ակունքում կանգնած է Մ. Մաշտոցը: Գրերի գյուտով բյուրեղանում է հայ ժողովրդի ազգային ինքնությունը, որով տարբերվում է ոչ միայն ոչ քրիստոնյա, այլև քրիստոնյա հարևաններից: Իսկ ինչո՞ւ Մաշտոցը ազգային ինքնության մեջ կարևորեց հատկապես մշակութայինը. որովհետև, ըստ Ջեքիյանի, Մաշտոցը մեր պատմության դասերից գիտեր, որ պետությունն անցողիկ է, մշակույթը՝ մնայուն³¹:

Հայոց պատմության ողջ ընթացքը Մաշտոցին արդարացրեց: Մեծ դժվարությամբ ստեղծել, վերականգնել, բայց պահպանել չենք կարողացել պետությունը: Այս իմաստով արդարացված է վերևում նշված այն միտքը, թե մեր ինքնության պահպանման գործում ավելի մեծ է մշակույթի, քան պետության դերը: Բայց այստեղ, հպարտանալուն զուգահեռ, նաև տրտմելու, խորհելու խնդիր ունենք, որովհետև ինքնատիպություն համարելով մշակութաստեղծ և արժեքաստեղծ լինելը և դրա մեջ որոնելով մեր գոյության երաշխիքը, իսկ երաշխիքների մեջ առաջին պլան մղելով լեզուն, ընտանիքը, հավատը՝ մեր հայրենիքում ապրել ենք գաղթականի հոգեբանությամբ, իրավացիորեն նկատում է Ս. Աղաջանյանը, որովհետև հոգևոր արժեքներին ապավինելը բոլորովին չի նշանակում, թե գոյատևման առաջնահերթ երաշխիքները դրանք են: Թշնամին (այն էլ մեր դեպքում) «ընկրկում է ոչ թե հոգևոր սխրանքի և մեծագործության, այլ այն բռունցքի առաջ, որի անունն է պետականություն, պետականորեն կազմակերպված համազգային կամք ու վճռականություն»³²: Դա չէ՞ արդյոք պատճառը, որ մեր հաղթանակների բացարձակ մեծամասնությունը եղել է բարոյական, այդ «հաղթանակների» պատճառով չէ՞, որ 300000 ք/կմ տարածքից մնացել է 29 հազարը:

Մի՞թե այստեղ նույնպես չի դրսևորվում հայի քրիստոնեական էությունը: Ղարեր շարունակ մեր հարևանները փարվել են գենքին, իսկ մենք՝ Աստվածաշնչին և խաչին: Պահպանելով մշակույթը, մեր բարոյական վեհությունը՝

³¹ Տես Լ. Ջեքիյան, Ինքնութեան խճանկար, նշվ. հրատ., էջ 59:

³² Ս. Արզումանյան, Լեզուն և գիրը մշակույթի համակարգում, Եր., 2012, էջ 112-113:

կորցրել ենք երկիրը, տեսել եղեռն, դատարկել ենք հայրենիքը, փոխարենը շենացրել գաղթօջախները, ստեղծել սփյուռք:

Շատ հաճախ ենք սիրում կրկնել, որ մեր հոգևոր-բարոյական կերպարը, մեր ինքնությունը մաքուր պահելու համար պետք է վերադառնալ ակունքներին, մաքրել մեր արժեքային-մշակութային կերպարն օտար ազդեցություններից, շերտանստվածքներից, իսկ «ակունք» ասելով, ըստ էության, նկատի ենք ունենում քրիստոնեության ընդունման առաջին դարերը (որովհետև չգիտենք, թե ինչպիսին ենք եղել մինչ այդ): Սա ոչ միայն կասկածելի, այլև հակազգային դիրքորոշում է, որովհետև բաց ենք թողնում մեր պատմության մի հսկայական հատված, որում ձևավորվել և կայացել ենք որպես էթնոս, ազգ՝ որոշակի հոգևոր-բարոյական կերպարով, որը գուցե մեր ճշմարիտ ակունքն է, հայի կերպի, ոգու ճշմարիտ նկարագիրը:

Այժմ, առաջին հայացքից, խիստ տարօրինակ հարց. ո՞ր մշակույթն է ներկայացնում ազգի դեմքը, դիմագիծը, ինքնությունը: Թվում է՝ պատասխանն ակնհայտ է. անշո՛ւշտ, ազգի ստեղծած ամբողջ մշակույթը: Բայց, կարծում ենք՝ խիստ ակնհայտ թվացող պատասխանն առարկելի է: Հիմնավորելու համար համառոտ անդրադառնանք ազգային մշակույթի դասակարգմանը, ստորաբաժանումներին:

Դասակարգման չափանիշ ընդունելով ժամանակային գործոնը՝ կարող ենք ազգային մշակույթի մեջ առանձնացնել պատմական (դիաքրոնիկ) և առկա (գործող և գործառնող՝ սինքրոնիկ) ձևերը:

Պատմական (դիաքրոնիկ) մոտեցման դեպքում մշակույթը կարող ենք դասակարգել ֆորմացիոն (նախնադար, ստրկատիրություն, ֆեոդալիզմ, կապիտալիզմ, սոցիալիզմ) կամ քաղաքակրթական (անտիկ, միջնադարյան, արդյունաբերական, հետարդյունաբերական) սկզբունքներով:

Յուրաքանչյուր հանրույթի առկա, ընդհանրական մշակույթը հիմք ընդունելով՝ կարելի է առանձնացնել երեք խոշոր շերտ՝ ընտրանի (էլիտա), ժողովրդական-զանգվածային և կենցաղային:

Էլիտար (ֆրանսերեն elite՝ լավագույն, ընտրյալ) է անվանվում այն մշակույթը, որը կողմնորոշված է դեպի մարդկանց որոշակի խումբ (էլիտա, ընտրանի, բարձրաշխարհիկ հասարակություն): Ընտրանին հասարակության առավել շնորհաշատ մասն է, որի շարքերը համարվում են հասարակության տարբեր շերտերում ծնված օժտված և ընդունակ մարդկանցով, և որը կազմում է տվյալ հասարակության, ազգի սերունդը:

Ընտրանու մշակույթը նաև բարձր մշակույթն է (այդ պատճառով երբեմն անվանում են բարձրաշխարհիկ), որի բնորոշ գծերն են կողմնորոշվածությունը համամարդկային արժեքներին, ուղղվածությունը մասնագիտացված լսարանին, պայքարը կենվորական գիտակցության, ցածրաձաշակության և անձաշակության դեմ:

Ընտրանու մշակույթը նաև պրոֆեսիոնալ մշակույթն է, որը ներառում է արվեստը, գիտությունը, փիլիսոփայությունը, դատաիրավական միտքը և այլն:

Չանգվածային մշակույթը սոցիալական մեծ խմբերի մշակույթն է, որին բնորոշ են հոգևոր պահանջների միջինացված մակարդակը, լայն զանգվածներ ընդգրկող ծեսերը, թատերականացված արարողությունները, մատչելիությունը: XX դարից սկսած՝ այդ մշակույթում լայնորեն օգտագործվում են հաղորդակցման զանգվածային ձևերը՝ հեռուստատեսություն, ռադիո, կինո, մանուկ, ներառվում են տեխնիկական միջոցները, մարզական մեծ համալիրները

և այլն: Ջարգանում է զվարճանքի (շուռ) արդյունաբերությունը և գործարարությունը:

Ջանգվածային մշակույթը պետք է նույնացնել ժողովրդականի և ազգագրականի հետ: Վերջինները տվյալ ժողովրդի և ազգագրական տարբեր շերտերի ստեղծած մշակույթն են (բացառությամբ պրոֆեսիոնալ մշակույթի), որոնք հանդես են գալիս հանրամատչելի և բանահյուսական շերտերով:

Ժողովրդական և ազգագրական մշակույթների շերտերը թեև նույնպես ներառում են մարդկանց մեծ խմբեր, բայց նույնական չեն զանգվածայինի հետ, որովհետև, ի տարբերություն վերջինի, արտահայտում են տվյալ էթնոսի ոգին, նրա պատմական ճակատագիրը, ժողովրդի իղձերը, ազատության, արդարության, սիրո ու մարդկայնության համամարդկային գաղափարները, դրսևորվում բանահյուսության մեջ, սիրո, պանդխտության, աշխատանքային ու հայրենասիրական երգերում, արվեստի տարբեր, բայց հանրամատչելի ձևերում: Ժողովրդական և ազգագրական մշակույթի առանձին տարրեր մշակվելով և կատարելագործվելով՝ համալրում են ազգի պրոֆեսիոնալ մշակույթը: Օրինակ՝ ժողովրդական երգերի կոմիտասյան մշակումները դարձել են մեր երգարվեստի դասական օրինակներ:

Կարծում ենք՝ հայ ազգի մշակութային որակը, դեմքը ներկայացնում է էլիտար, բարձրաշխարհիկ, պրոֆեսիոնալ մշակույթը, և քանի որ այդ մշակույթը ամենաբարձր նվաճումներ Հայաստանում ունեցել է միջնադարում, երբ փայլուն հաջողությունների ենք հասել դատաիրավական մտքում, բժշկության, բնագիտության, փիլիսոփայության, գեղարվեստական գրականության, եկեղեցական ճարտարապետության և այլ ոլորտներում, ապա, կարելի է ասել, որ հայ ազգի ինքնությունը հիմնականում ներկայացնում է էլիտար մշակույթի միջնադարյան փուլը: Անշուշտ, հայ ժողովրդի պատմության այլ փուլերում, մասնավորապես՝ XIX դարում, XX դարի առաջին երկու տասնամյակում, խորհրդային շրջանում մշակույթի վերելք դիտվել է, բայց այն ամփոփվել է ընդհանուր մշակույթի շրջանակներում, ներկայացվել այլ երկրներում, տարածքներում ձևավորված և իշխող դարձած ոճերի, ուղղությունների սահմաններում, մինչդեռ միջնադարում հայ մշակույթը ոչ միայն գտնվել է նույն ժամանակաշրջանի եվրոպական մշակույթի մակարդակին, այլև որոշ ոլորտներում առաջ է անցել, տոն տվել, ուղղություն ձևավորել³³:

Ազգային ինքնության առանձին տարրեր կարող են ներկայացնել նաև ժողովրդական և ազգագրական, կենցաղային և զանգվածային մշակույթների կատարյալ, բնութագրական, մշակված էթնոարտահայտիչ ձևերը:

Ջանգվածային մշակույթը հիմնականում չունի այդ դերը, որովհետև ազգային դիմագիծ չունի (կամ գրեթե չունեն), իսկ երբեմն, ինչպես մեր օրերում և մեր դեպքում է, կարող են կատարել հակազգային դեր:

Մեր զանգվածային մշակույթը այսօր դարձել է ազգային անվտանգությանը սպառնացող ամենալուրջ վտանգը, որովհետև արևմտյան զանգվածային, «ուղեղներ լվացող (արդուկող)» արվեստը, արաբա-թաթարա-թուրքական երաժշտությունը խաթարել են ազգի հոգևոր-բարոյական կերպարը,

³³ Այդ մասին մանրամասն տես **Ա.Սարգսյան**, Ինքնուրո՞յն, թե՞ համադրական քաղաքակրթություն // «Բանբեր ՀՊՏՀ», 2009 (2), էջ 164-182, **Ս.Ջաթարյան**, Հայկական Վերածննդի հարցը (մեթոդաբանական վերլուծություն), Եր., 2006, **Ա.Սարգսյան**, Հայկական Վերածննդի հարցի շուրջ «Հումանիտար գիտության արդի հիմնախնդիրները Հայաստանում» // Պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների 2-րդ գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու, Եր., 2005, էջ 261-273:

դիտվում է անձաշակության ամենավայրագ գործընթաց, բարձր արժեքները փոխարինվում են հակարժեքներով: Կարծես ծրագրված ձևով, հետևողականորեն փչացնում են մեր գենի դեռ առողջ մնացած մասերը:

Խոսակցության հատուկ թեմա է մեր կենցաղային մշակույթը, որը չենք վարանում անվանել ազգային խայտառակություն: Բնակարանից դուրս մենք մեր կենցաղում նման ենք քաղաքակրթությունից կիլոմետրերով հեռու մնացած ցեղախմբի, որը, որտեղով անցնում, աղբ է թողնում: Ծայրահեղ բևեռներում են գտնվում մեր էլիտար և զանգվածային-կենցաղային մշակույթները: Պետք է ամեն ինչ անել, որ մեր կենցաղային և զանգվածային մշակույթները բարելավեն իրենց որակը, արժանի լինեն պատմություն և բարձր մշակույթ ունեցող քաղաքակրթ ազգին: Այստեղ կարևոր դերն ունեն ՋԼՄ-ները, հատկապես հեռուստատեսությունը: Բացարձակապես անհիմն, նույնիսկ հակազգային է այն պնդումը, թե հեռուստատեսությունը բավարարում է այսօրվա հասարակության, հատկապես երիտասարդության պահանջարկը: Մենք բռնության, ահաբեկչության, անձաշակության, լկտիության, այլասերվածության ազգային պահանջարկ երբեք չենք ունեցել: Նման տեսակետի կողմնակիցները ցույց են տալիս իրենց անձաշակությունը, անձարակությունը, անկրթությունը, անգրագիտությունը և այդ ամենը ներկայացնում որպես հասարակության և երիտասարդության պահանջարկ: Իրոք, դաստիարակողները դաստիարակության լուրջ պակաս ունեն:

Ահա թե ինչու, խոսելով «հայի ինքնություն» և «հայի մշակութային ինքնություն» հասկացությունների նույնականության մասին, նկատի պետք է ունենալ ոչ թե հայ ժողովրդի ստեղծած ողջ մշակույթը կամ այն մշակութային միջավայրը, որում ապրում է հայը, այլ էլիտար մշակույթը՝ ներառյալ ազգագրական մշակույթի էթնիկ դրսևորումների կատարյալ տեսակները:

Մշակութային ինքնության վերարտադրության, զարգացման և հարատևության համար անհրաժեշտ են.

1. Հայրենիքի առկայությունը, որը ոչ միայն ծնում և սնում է ազգային մշակույթը, այլև ներշնչանքի աղբյուր է օտար ափերում դեգերող մեր հայրենակիցների համար:
2. Հայրենիքում ապրող ժողովրդի և մտավորականության այնպիսի թվի ապահովում, որը մշակույթը պահելու, վերարտադրելու և զարգացնելու համար ստեղծում է բավարար պայմաններ: Արտագաղթը (հատկապես մտավորականության ընտրանու շերտի) գրկում է ազգին հայրենիքում հոգևոր-բարոյական-արժեքային-մշակութային ինքնատիպության վերարտադրության հնարավորությունից:

Այժմ անդրադառնանք ազգային ընդհանրական նպատակի կամ առաքելության խնդրին: Դեռևս XIX դարի հայ մտածողներն էին գրում մեր ժողովրդի բացասական գծերից մեկի՝ անմիաբանության մասին, թվարկում դրա պատճառները (աշխարհագրական միջավայր, տարբեր պետությունների միջև բաժանվածություն, տարաբնույթ կրոնական ուղղությունների միջև պակասկտվածություն և այլն): Բայց, ի վերջո, այն տեսակետն էին առաջ մղում, որ ազգը սիրով ու միաբանությամբ կաշխատի, «երբ որ իրեն առջեւը նպատակ մը, վախճան մը ունի, եւ անոր հասնելու կ'աշխատին մէջի ամեն մեկ անձինքը»³⁴, ուստի «... մեր ազգին առաջին մեծ կարօտութիւնը եւ ուրիշ ամենայն

³⁴ Գ. Այվազովսքի, Մեր ազգին կարօտութիւններ // «Մասեաց աղանի», 1861, թիվ 1, էջ 6:

կարօտութիւններուն աղբիւրը հասարակաց վախճան մը, նպատակ մը չունենալն է»³⁵:

Ազգային ընդհանրական նպատակի բացակայութիւնն է ազգին զրկում միասնութիւնից, ազգային խնդիրների մեջ մեկ միասնական միտք ունենալուց, հանուն մեկ միասնական գաղափարի հայրենիքում մնալու, նույնիսկ զրկանքների գնով հայրենիքը շենացնելու գիտակցումից: Այսօր էլ արտագաղթը սնող գործոններից մեկը ազգի գոյութանն իմաստ տվող միասնական գաղափարի բացակայութիւնն է, այն մտքի քարոզչութիւնը, թե հանուն ինչի՞ պետք է մնալ հայրենիքում: Եվ այսպէս՝ ո՞րն է հայ ազգի պատմական առաքելութիւնը: Երբեմն տրվում են ընդհանրական պատասխաններ, երբեմն՝ որոշակի: Երկուսի վկայակոչումն էլ կատարենք XIX դարից: Այդ դարի շատ մտածողներ այն տեսակետին էին, որ հայ ժողովրդի պատմական առաքելութիւնը երկու քաղաքակրթութիւնների՝ Արևմուտքի և Արևելքի միջև միջնորդ լինելն է: Հայաստանն է եղել այն կամուրջը, կապող օղակը, որով արևմտյան մշակույթը փոխանցվել է Արևելք, իսկ փոխանցողները եղել են հայերը: Այժմ, կարծում են, այդ առաքելութիւնն այլևս գործող չէ: աշխարհը շատ է փոքրացել, և Արևելքն առանց մեզ էլ կարող է հաղորդակցվել Արևմուտքի հետ:

Առաքելութան ավելի որոշակի խնդիրներ են առաջադրում XIX դարի երկրորդ կեսի արևմտահայ մտավորականները, ում կարծիքով՝ ազգի գոյութան նպատակներից են (դրանք արդիական են նաև այսօր).

- ա) ազգի տնտեսական վիճակի բարելավումը (տնտեսական առաջադիմութիւնը),
- բ) ազգի մտավոր և բարոյական վիճակի բարելավումը (բարոյական առաջադիմութիւնը),
- գ) գաղթի դադարեցումը (հայութեանը հայրենիքում պահելը),
- դ) ազգի քաղաքական վիճակի բարելավումը (անկախ պետականութեան ստեղծումը), մեր պարագայում՝ ամրապնդումը, անվտանգութեան երաշխավորումը:

Ներկայացված խնդիրները վերաբերում են պետութեան մարտավարութեանը և ճիշտ, ուղղորդված քաղաքականութեան դեպքում հաջողութեան հույս կարելի է ակնկալել:

Կարծում ենք՝ հայ ազգի պատմական առաքելութեան մեջ լուծում պահանջող խնդիրների երկու խումբ պետք է առանձնացնել՝ *արտաքին* և *ներքին*:

Արտաքինը վերաբերում է հայոց պահանջատիրութեան արդարացի լուծմանը (Հայկական հարց, հայրենատիրում, Արցախի հարցի վերջնական լուծում և այլն):

Առաքելութեան ներքին խնդիրների մեջ կարևորագույնը հայի հոգևոր-բարոյական և արժեքային-մշակութային ինքնատիպութիւնը զանազան շերտանստվածքներից մաքրելն է (անաղարտ վիճակին վերադառնալը), պահպանելը, վերարտադրելը և զարգացնելը: Ինչպէս Ա. Աղայանն է գրում՝ «Ազգային գոյութեան նպատակը կամ առաքելութիւնը հայկական հոգևոր-մշակութային ինքնատիպութեան և արժեքային համակարգի պահպանմամբ և զարգացմամբ աշխարհը հարստացնելն է»³⁶:

³⁵ Նույն տեղում, էջ 7:

³⁶ Ա. Աղայան, Ազգային անվտանգութիւն. հասկացութիւնը, էությունը, ձևավորումը և առաջնահերթութիւնները, Եր., 2002, էջ 77:

Դրա համար հարկ է (փորձենք պատասխանել՝ դարձյալ մեր մեծերի օգնությանը դիմելով)։

ա) մաքրվել բարոյապես, իսկ դրա համար անհրաժեշտ է, որ «մենք և՛ մեր սրտում, և՛ աշխարհքի առաջ անկեղծ խոստովանենք ու ճանաչենք մեր դժբախտությունը», որին կհետևի «...ինքնակատարելագործության բարձր ցանկությունն ու ազնիվ գործը: Ուրիշ ճանապարհ չկա. ներսից է լինելու հաստատ փրկությունը, որովհետև ներսից ենք փչացած»³⁷:

բ) Քանի որ ազգի հոգևոր կառույցի հիմքը ազգային բարոյականն է, այդ պատճառով պիտի դառնանք այդպիսին, որպեսզի որպես ազգ չկորչենք³⁸:

գ) Ազգին այնպիսի գաղափարներ տալ, որոնք կբերեն խոր հավատ, լավատեսություն, «անսպառ կորով, ոգու լիութիւն, միութեան ծարավ», որով կվերակառուցվի քայքայիչ ուժերի կողմից պառակտված ազգը³⁹:

դ) Առաջնորդելով այն մտայնությամբ, որ ճակատագրի եղբայր է ամեն հայ: Ավելին՝ «ամեն հայ դա դու ես. ահա ազգային բարոյականի անխախտ օրենքը»⁴⁰:

Շարունակելով մեծերի խորհուրդների այս ընդհանուր տրամաբանությունը՝ ավելացնենք. ամեն մեկն իր տեղում, իր գործում պետք է անի առավելագույնը, այսինքն՝ ապրի երկրում սիրով, օրվա իշխանավորին չնույնացնի պետականության և հայրենիքի հետ, աշխատի ու պայքարի այնպես, որ անկրթությունն ու գոռբայությունը նահանջեն, արդարությունը վերականգնվի, մարդն աշխատանք ունենա, այդ աշխատանքից հաճույք ստանա ու կարողանա դրանով արժանավայել ապրել ու ընտանիք պահել, ապահով զգա իր երկրում, վաղվա օրվա նկատմամբ հավատ ունենա, երկիրը հայրենիք դարձնի, զարգացնի իր մշակույթը և դրանով իսկ ուրույն տեղ զբաղեցնի ազգերի համադաշնության մեջ:

Ահա թե ինչու ընդունելի չէ այն «հայրենասերի» վարքագիծը, որը, պատեհ առիթն օգտագործելով, հեռանում է հայրենիքից և արդարացնում իր հայրենալքությունը: Սա բաժակաճառային հայրենասիրություն է, որի պակասը, ցավոք սրտի, երբեք չենք ունեցել: Իսկական հայրենասերը հազարումեկ փաստարկ կունենա հայրենիքում ապրելու համար: Եվ եթե բոլորը մնային հայրենիքում ու բռունցքվեին մեկ գաղափարի շուրջ, ինչե՛ր չէին անի:

³⁷ Հ. Թումանյան, Դառնացած ժողովուրդ ենք, նշվ. հրատ., էջ 225:

³⁸ Տե՛ս **Գ. Նժդեհ**, Խօսակցութիւն մը զօրավար Գ. Նժդեհի հետ, Հատընտիր, նշվ. հրատ., էջ 651:

³⁹ Տե՛ս **Գ. Նժդեհ**, Մեծ գաղափար, Հատընտիր նշվ. հրատ., էջ 636:

⁴⁰ **Գ. Նժդեհ**, Խօսակցութիւն մը զօրավար Գ. Նժդեհի հետ, Հատընտիր նշվ. հրատ., էջ 651:

АРАМ САРКИСЯН

*Заведующий кафедрой
„Философии и истории армянского народа“ АГЭУ,
доктор философских наук, профессор*

Где искать свою идентичность, и в чем миссия армянского народа?- Автор обосновывает, что идентичность выражается созданной им в элитарной культуре, включая совершенные формы этнографической и народной субкультур, а миссией является сохранение, развитие и посредством трансляции духовного обогащения мира самобытной культурой и ценностью армянской нации.

ARAM SARGSYAN

*Head of the Chair of
„Philosophy and Armenian History“ at ASUE,
Doctor in Philosophical Sciences, Professor*

Where to Find Our Identity, and What's the Mission of the Armenian People?- The author proves that identity is expressed in elite culture, including advanced forms of ethnographic and folk subcultures, and the mission is to preserve, develop a unique Armenian culture and transfer it to world's culture enriching it.